ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **06/21/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:
Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Վիգեն Գրիգորյանը, Նարինե Խաչատրյանը, Հայկ Մարդոյանը, Աիդա Մովսիսյանը, Վիտալի Յուսուբովը, Ջոն Պողոսյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Մարգարիտա Սողոյան, Արմեն Շահբազյան
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը
Նիստը արձանագրում էր ՝ ը
Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 21-ի հերթական արտագնա նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերը նվիրատվության կարգով Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի Նորաշեն բնակավայրի վարչական տարածքում «Շինվեկտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Նորաշեն բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,
3. Համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, անհատական կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 31-ի N40-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին,
5. Փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին,
6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք աճուրդով օտարելու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասով,Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող, ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Սարատովկա հասցեում գտնվող 9,3248 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 06-099-0229-0127) գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր և ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Սարատովկա հասցեում գտնվող 5,599 հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 06-099-0229-0055) գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողամասերը նվիրատվության կարգով փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:
2. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՇԻՆՎԵԿՏՈՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆՈՐԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման 28-րդ կետը և 31.05.2024-ի «Շինվեկտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը կողմից Նորաշեն բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Տալ նախնական համաձայնություն «Շինվեկտոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Նորաշեն բնակավայրի կրթահամալիրի կառուցման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 40-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեական օրենսգրքի 109-րդ հոդվածի 2-րդ կետով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառվարության 2016 թվականի հունիսի 2-ի N631-Ն որոշումով հաստատված կարգի 11-րդ և 12-րդ կետերով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել հանձնաժողովի հետևյալ անահատական կազմը՝

1) Նունե Սոլոյան – աշխատակազմի քարտուղարի պաշտոնակատար

2) Նաիրա Սարգսյան – Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի,սպասարկման և գովազդի բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար

3) Արփինե Դավթյան - ՄՍԾ Տաշիրի ՏԿ սոցիալական աշխատանքի և զբաղվածության ծրագերի բաժնի պետ,

4) Լիլիթ Ավետիկյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության և առողջապահության,կրթության,մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (սոցիալական աշխատողը),

5)Մերի Խանաղյան - Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման սոցիալական աջակցության և առողջապահության,կրթության,մշակույթի,սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի առաջատար մասնագետի (սոցիալական աշխատողը),

6) Նաիրա Պետրոսյան- « Տաշիրի համար 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող,

7) Հովսեփ Մարտիրոսյան – ՀՀ ՆԳՆ ՈԼՄՎ ԱԳ և ԸԲԿԲ բաժնմունքի պետ

8) Սուսան Մարդոյան – «Տաշիրի Արտակ Խաչատրյանի անվան ավագ դպրոց»-ի ուսուցիչ,

9) Հասմիկ Խոռոյան –«Տաշիր ԲԿ» ՓԲԸ բժիշկ;

2. Սահմանել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմից հանձնաժողովի նախագահ Նունե Սոլոյանին :

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հնարապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 31-ի «Համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին » N 40-Ա որոշումը:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63-Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ԱՎԵՏԻԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 20-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N57-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն

ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի եզրակացությունները.

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Բավարարել համայնքի բնակիչի դիմումը և համայնքի բյուջեից նրա ընտանիքԻն հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍՈՂՈՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով և 8-րդ կետերով և հիմք ընդունելով համայնքապետարան դիմած քաղաքացու դիմումը ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել փոխադրամիջոցի գույքահարկի արտոնություն՝
   1) ՀՀ, Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան փողոց, բշ 12, բնակարան 5 հասցեի բնակիչ Քերոբ Ստեփանի Գլոյանին (ՀՎՀՀ՝ 186287991) ազատել Տաշիր համայնքում հաշվառված ՎԱԶ 21063 մակնիշի, 41SS487 պետհամարանիշի ավտոմեքենայի գույքահարկի տույժից 28533(քսանութ հազար հինգ հարյուր երեսուներեք) դրամ :
   2. Փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնության մասով փոխադրամիջոցի գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում:
   3 Սույն որոշման 1-ին ենթակետով սահմանված արտոնությունը կիրառել գույքահարկի գծով պարտավորությունների ապառքը (մայր գումարը) 2024 թվականի հուլիսի 30-ը ներառյալ մարելու դեպքում

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՄԵՆ ՇԱՀԲԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Տաշիր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Հայաստանի Հանարպետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող քաղաք Տաշիր, Դպրոցականների փողոց, բշ 10, բնակարան 40 հասցեում գտնվող անշարժ գույքը (63,1 քմ մակերեսով 2 սենյականոց բնակարան՝ վկայական N1687837) օտարել աճուրդով;
2.Գույքի մեկնարկային գինը սահմանել 2700000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար)

դրամ՝ համաձայն «Մար-Մոս» ՍՊԸ-ի կողմից տրված անշարժ գույքի գնահատման հաշվետվության (Որակավորման վկայական ՈԳԳ-2022-61):

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 10 –ը , ժամը՝ 14:00-ին

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Ավագանու անդամներ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Կ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Տ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆԸ

_____